ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 736
«12» 07 2024

Հեռ. (+374 10) 20-94-02

«Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի տնօրեն

Լևոն Կիրակոսյանին

Ծանուցում

Հարգելի՛ պարոն Կիրակոսյան

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի միջև 14.03.2024թ կնքվել են ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3 ծածկագրով գրենական պիտույքների, 11.03.2024թ-ին ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10 ծածկագրով տնտեսական ապրանքների, 11.06 .2024թ-ին ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3 ծածկագրով համակարգչային սարքավորումների մատակարարման պայմանագրերը:

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 04.07.2024թ N Ե/1618-24 գրությունը /կցվում է/, ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.3 կետով, այն է "*Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:*"

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն մասնակի լուծում է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3 ծածկագրերով պայմանագրերը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570060023050100 հաշվեհամարին վճարել ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման՝ 18750 /տասնութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 14420 /տասնչորս հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման՝ 18750 /տասնութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 12500 /տասերկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովման՝ 20250 /քսան հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ, պայմանագրի կատարման ապահովման՝ 13500 /տասներեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /1-02